


3.4. ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Համաձայն հետազոտությամբ ստացված և գլխավոր համակցության նկատմամբ գնահատված արդյունքների, 2001 թվականի ընթացքում հանրապետությունում ոչ առևտրային կազմակերպությունների ընդհանուր դրամական միջոցների մուտքերը կազմել են 15357.2 մլն. դրամ, այն դեպքում, երբ դրանց դրամական միջոցների փաստացի ելքերը կազմել են 14639.1 մլն. դրամ, իսկ հաշվեգրված ելքերը՝ 15069.8 մլն. դրամ:

Ոչ առևտրային կազմակերպությունների ընդամենը մուտքերում հետազոտությամբ առանձնացված խմբերից ամենամեծ տեսակարար կշիռն ունեն հասարակական կազմակերպությունները՝ 7485.6 մլն. դրամ (կամ ընդամենը մուտքերի 48.7 %-ը) և հիմնադրամները՝ 6793.9 մլն. դրամ (կամ 44.2 %-ը): Հետազոտությամբ ընդգրկված 19 արհեստակցական կազմակերպությունների միությունների և դրանց մեջ մտնող արհեստակցական կազմակերպությունների դրամական միջոցների մուտքերը կազմել են 306.5 մլն. դրամ, ինչը կազմում է բոլոր ոչ առևտրային կազմակերպությունների ընդամենը մուտքերի 2.0%-ը:

Ոչ առևտրային կազմակերպությունների դրամական միջոցների ելքերի մեջ ընդհանուր պատկերը չի փոխվում: Այսպես, հասարակական կազմակերպությունների դրամական միջոցների փաստացի ելքերը կազմել են 7086.1 մլն. դրամ (ընդամենը փաստացի ելքերի 48.4 %-ը), իսկ հաշվեգրված ելքերը՝ 7145.1 մլն. դրամ կամ 47.4%:

Գլխավոր համակցության նկատմամբ գնահատված արդյունքներով ստացված, ոչ առևտրային կազմակերպությունների 2001թ. ընթացքում արձանագրված դրամական միջոցների մուտքերի և ելքերի բաշխումն ըստ հետազոտությամբ առանձնացված խմբերի տեսակարար կշիռների արտացոլված է գծապատկեր 5-ում:



Գծապատկեր 5

Ոչ առևտրային կազմակերպությունների դրամական միջոցների ելքերի և մուտքերի գնահատված ծավալների բաշխումն ըստ հետազոտությամբ առանձնացված կազմակերպությունների խմբերի տեսակարար կշիռների, 2001թ. արդյունքներով

Հետազոտված ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսական արդյունքներն, Ազգային հաշիվների համակարգում ներառելու նպատակով, անհրաժեշտ է տարանջատել ըստ ինստիտուցիոնալ հատվածների: Այսպես, հետազոտությամբ պարզված գործող 216 ոչ առևտրային կազմակերպություններից 186-ը (կամ 86.1%-ը) ծառայություններ են մատուցում ֆիզիկական անձանց, իսկ 30-ը՝ (կամ 13.9%-ը) իրավաբանական անձանց որոշակի խմբին:

Ազգային հաշիվներում ընդունված ինստիտուցիոնալ հատվածների տարանջատման տեսանկյունից, տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների հատվածին են պատկանում գործող կազմակերպությունների ընդամենը 71.8%-ը:

Ըստ հետազոտության գլխավոր համակցության նկատմամբ գնահատված արդյունքների, Ազգային հաշիվների համակարգի տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների հատվածին պատկանող կազմակերպությունների դրամական միջոցների մուտքերը կազմել են 10200.9 մլն. դրամ (կամ ընդամենը դրամական միջոցների մուտքերի 66.4%-ը), դրամական միջոցների փաստացի ելքերը՝ 10097.5 մլն. դրամ (ընդամենը փաստացի ելքերի 69.0%-ը), իսկ դրամական միջոցների հաշվեգրված ելքերը՝ 10317.2 մլն. դրամ կամ ընդամենը դրամական միջոցների հաշվեգրված ելքերի 68.5%-ը: